
Դաս 11 Մարտի 7-14, 2015
ԿՅԱՆՔԸ ՀԱՎԱՏՈՎ
Մարդի վախը որոգայթի մեջ կգցի,
բայց Տիրոջն ապավինողը կապաստանվի:
Առակաց 29.25

Քրիստոնյաները պետք է ապրեն ըստ հավատի։
Մենք պետք է անենք ինչ պատվիրել է Աստված։
Մենք պետք է վստահենք Իրեն, և թույլ տանք Նրան, որ պարագաները ըստ Իր կամքի ընթանան։



1. ԱՊՐԵԼ ԸՍՏ ՀԱՎԱՏԻ։
    1. Պահե՛ք օրենքը։ Առակաց 28.4, 7, 9
    2. Որոնեցե՛ք Տիրոջը։ Առակաց 28.5

2. ԳՈՐԾՆԱԿԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ։
    1. Խոսք հարուստին։ Առակաց 28.8, 19, 20, 22, 24, 27
    2. Աղքատի ձեռնարկը։ Առակաց 28.3, 6, 29.13
    3. Սւրել ճշմարտությունը։ Առակաց 29.15

# ՊԱՀԵՔ ՕՐԵՆՔԸ




«Օրէնքը ձգողները կգովեն ամբարիշտներին, բայց օրէնքը պահողները կզայրանան նրանց:» (Առակաց 28.4)

“Օրէնքը պահողը իմաստուն որդի է, բայց շռայլների բարեկամը կամաչեցնի իր հորը։” (Առակաց 28.7)

«Ով որ մերժէ իր ականջը օրէնք լսելուց, նորա աղօթքն անգամ գարշելի է։ » (Առակաց 28.9)

Հավատով կյանքի առաջին սկզբունքը դա ընդունելն է Աստծո խրատները, որ Նա տալիս է. այսինքն օրենքը:

Որքա՞ն հավատը կարող է մեզ օգնել մեր կյանքում:

Նախ, այն զանազանում է բարին ու չարը և մեզ հնարավորություն է տալիս ճիշտ որոշումներ կատարել:

Եվ նաև, այն կյանքի գործնական ուղեցույց ն է  բոլոր բաներում: (կերակուր, հանգիստ, հաղորդակցություն, ընտանիք...)

# ՈՐՈՆԵՑԵ՛Ք ՏԻՐՈՋԸ

«Չար մարդիկն իրավունքը չեն հասկանում, բայց Տիրոջը խնդրողները բոլոր բաները կհասկանան:» (Առակաց 28:5)

| | Առակաց 28.4 | Առակաց 28.5 |
|---|---|---|
| 1 | Օրենքը ձգողները | Չար մարդիկ |
| 2 | Գովում են ամբարիշտներին | Իրավունքը չեն հասկանում |
| 3 | Բայց օրենքը պահողները | Բայց Տիրոջը խնդրողները |
| 4 | Զայրանում են - չեն հանդուրժում | Հասկանում են ամեն բան: |

Ովքեր չեն հետևում օրենքին, չեն տարբերակում բարին ու չարը (կետեր 1 և 2), նրանք գովաբանում են նրանց , ովքեր արժանի չեն և նրանք չեն հասկանում կատարյալ արդարությունը:

Օրենքը մեր «դաստիարակն» է (կետ 3). Այն ուղղում է մեզ դեպի Աստված (Գաղատացիս 3.24).

(կետ 4) Աստված մեզ զգուշություն է տալիս որպեսզի հակառակվենք անզգամին և կկարողանանք «բոլորը» հասկանալ:





# ԽՈՍՔ ՀԱՐՈՒՍՏԻՆ...

«Իր ստացվածքը տոկոսիքով ու վաշխով շատացնողը, աղքատներին ողորմողի համար է ժողովում նորան»
(Առակաց 28:8)

Մեր Հայրը տերն է աշխարհի հարստության: Հավատով ապրողն ունի այս որակները.

- Մի հարստացիր շահարկելով աղքատին (Առակաց 28.8)
- Սեփական քրտինքով աշխատիր (Առակաց 28.19)
- Մի շտապիր հարստանալ
  - Մեղք գործելով (Առակաց 28.20)
  - Ժլատությամբ (Առակաց 28.22)
  - Կամ բռնադատելով ծնողներին (Առակաց 28.24)
- Տուր չքավորին (Առակաց 28.27)

# Աղքատի ձեռնարկը...

«Լավ է իր ուղղության մեջ գնացող աղքատը քան թե ծուռ ճանապարհների տեր մարդը թեև հարուստ լինի։»
(Առակաց 28.6)

Հե՞շտ է թե՞ դժվար է հավատով ապրող աղքատի համար կյանքը։

Աղքատը նույն պարտականությունն ունի ինչպես հարուստը

(Առակաց 28.3)

- Աղքատությունը մեղքը չի արդարացնում։

Արդար աղքատը լավ է քան անզգամ հարուստը

(Առակաց 28.6)

- Հարստությամբ չէ չափվում բարոյականությունը։

Բոլորս հավասար ենք։
(Առակաց 29.13)

- Աստված կյանք է տալիս և հոգում է երկուսին էլ։ Մենք պետք է հարգենք և սիրենք միմյանց։







«Ոմանք, ովքեր դավանում են, որ հավատում են ճշմարտությանը երբեմն ձախողվում են կորցնելով խորաթափանցությունը պարզապես չգնահատելով բարոյական արժեքները... Նրանք միգուցե ունեն գումար և սեփականություն, և դա բավական է որ ազդեցություն ունենան, բայց դրանով Աստծո բարեհաճությունը չեն շահի: Փողը զորություն ունի ազդեցիկ լինելու: Երբեմն աղքատը հարստանում է բնավորության կատարելությունը և բարոյականության արժքները կորչում են: Բայց որն է Աստծո համար արժեքավոր: Բոլոր երկրի անասունները Իրենն են: Ամբողջ երկիրը Իրենն է և բնակիչները մարախների պէս են: Տղամարդկությունը և ոչ էլ սեփականությունն է որ հարց է լուծում Տերը աչառ չէ»

**էլեն Ուայթ (Վկայություններ եկեղեցուն, հատոր 1, գլ. 94, էջ. 536)**



# ՍԻՐԵԼՈՎ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

«Գավազանը և հանդիմանությունը իմաստություն կտա, բայց բաց ընկած տղան անարգանք կբերի իր մոր համար» (Առակաց 29:15)





Երբ ծառը սկսում է թեքել, այն պետք է ուղղել: Ծառը «պատժվում» է, երբ կողքից կապում են: Այս շտկման աշխատանքը, ոչ թե վնասում է ծառին այլ օգնում է:



Մարդիկ այս ծառի նման են: Մեր վատ արարքները պետք է պատժվեն, որպեսզի դրանք ողղվեն:



Եթե մենք «չէ» չասենք, ապա երեխան կկործանվի: Նա բոլորին մատի վրա կխաղացնի:

Մայրը կարող է հարցնել, թե կարելի է պատժել երեխային:Մորակը կարող է անհարժեշտ լինել, երբ որիշ ելք չկա: Եթե դրա կարիքը չկա, ապա լավ կլիրներ մորակ չօգտագործի: Բայց եթե փափուկ միջոցները չեն գործում պատիժ պիտի կիրառվի. սիրով խրատելով երեխային:Երբեմն նման մի պատիժը բավական կլինի, որպեսզի երեխան չշեղվի ճանակարհից և զգոն լինի

էլեն Ուայթ. (Խորհուրդներ ծնողներին, ուսուցիչներին և ուսանողներին
գլ. 13; էջ. 116)

«Մեր օրերում էլ Հեղիներ կան, որ հստակ մի բան չեն անում կանխելով իրենց երեխաների ինքնակամությունը: Ծնողներ պետք է կիրառեն Աստծո կողմից տրված իրենց իրավունքը խրատելով երեխաներին: Թող ծնողները և խնամակալները, ովքեր իրենց երեխաների արարքները մատների արանքով են նայում արդարացնելով մեղքը հիշեն, որ նրաց սխալ գործերի միջոցն են դառնում: Եթե անդադար ներելու փոխարեն մտրակ կիրառվեր, և ոչ թե անողոք այլ սիրով և աղոթքով, մենք կտեսնեինք երջանիկ ընտանիքներ և բարեկեցիկ հասարակություն:»

**Էլեն Ուայթ (Երեխայի ուղեցույց, գլ. 47, էջ. 276)**


Դաս 11 Մարտի 7-14, 2015
ԿՅԱՆՔԸ ՀԱՎԱՏՈՎ
Մարդի վախը որոգայթի մեջ կգցի,
բայց Տիրոջն ապավինողը կապաստանվի:
Առակաց 29.25